ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26 հոկտեմբերի 2021թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի N350-Ա որոշումը և մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N463-Ա հրամանը՝ ս. թ. հոկտեմբերի 18-ից մինչև 21-ը ներառյալ.

ՀՀ Կոտայքի մարզպետարանի (իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը) տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Հարություն Ալեքսանյանի (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Ռոբերտ Թումոյանի, նույն վարչության՝ ՀԳՄ բաժնի պետ Արմեն Հակոբյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության խորհրդական Հայկ Հակոբյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սեդա Բաղդասարյանի, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետ Արթուր Հակոբյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կամո Թումոյանի, իրավաբանական բաժնի պետ Արմեն Վարդանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Գուրգեն Ավետիսյանի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Շավարշ Արտաշյանի (աշխատանքային խմբի անդամներ) կողմից իրականացվեց իրավական հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի <<Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 03-Ն հրամանով հաստատված իրավական հսկողության հարցաշարով, ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի համայնքում:

1.Իրավական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների, ինչպես նաև հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Իրավական հսկողության արդյունքների և հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեմ՝ Պտղնի համայնքի ղեկավար Առաքել Վիրաբյան:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ղեկավարին:

Աշխատանքային խումբ՝

ղեկավար՝ Հ. Ալեքսանյան,

անդամներ՝ Հ. Հակոբյան,

Դ. Թումոյան,

Ս. Բաղդասարյան,

Ա. Հակոբյան,

Ա. Վարդանյան,

Կ. Թումոյան,

Գ. Ավետիսյան,

Ա. Հակոբյան,

Շ. Արտաշյան

Պտղնի համայնքի ղեկավար՝ Ա. Վիրաբյան: